


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ԿՐԾՆՔԸ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ**

Արդի պաշտօնական Ռուսիոյ գիրքը եկեղեցիի եւ կրօնքի հանդէպ շատ լաւ կը ցոլանայ Սթալինի հետեւեալ խօսքերուն մէջ, յայտնուած Կեդրոնական Գործադիր Յանձնախումբի նախագահութեան նիստին մէջ։ Ռուսիոյ ներկայիս էն ազգեցիկ վարիչին կըրօնական դադափարները թէպէտ կատարելապէս չենք բաժներ, բայց անոնք յայտնի կը ցուցնեն թէ Ռուս Յեղափոխութիւնը նոր փուլի մը մէջ մտած է, որ կը խոստանայ չընորհել կրօնական կատարեալ ազատութիւն մը։ Աթալինի ջանքով է որ կառավարութեան եւ Ռուս Օրթոտոքս եկեղեցիի միջեւ համաձայնութիւն մը գոյացաւ։ Ն. Ա.

«Յեղափոխութենէն ասդին մենք բազմաթիւ դժուարին ու ծանրակշիւ խնդիրներ լուծեցինք, բայց ես մեր վերջին բարեկամական հասկացողութիւնը, ուստի օրթոտոքս եկեղեցւոյ հետ, սովեթ գիւտնագիտութեան մեծագոյն յաջողութիւնը կը նկատեմ»։

«Բազմաթիւ ընկերներ իրենց ծայրայեղ ու ոչ-բանաւոր հակակրօնութեան բերումով յամառօրէն հեգնեցին մեր ջանքերը, լուծելու համար կառավարութեան եւ ուստի եկեղեցիին միջեւ գտնուած ծանրակշիւ խնդիրը։

Բայց գրեթէ բոլոր յեղափոխութիւնները կը ձախողին ու աղէտ մը կը դառնան զանոնք

յաջողցնող բուն մոլեռանդութեան ու նախանձայնութեան պատճառաւ։

«Մոլեռանդը մարդ մըն է, որ տեսիլքի մը կը կառչի ընդդէմ ուրիշի մը տեսիլքին, բայց չի հանդուրժիր լսելու իր հակառակորդին պատճառարանութիւնները։

«Իբրեւ ասիացի մը, ես առանց հետադիմութեան ու անսեթեւեթ, իմ միտքս կը պարզեմ անկեղծօրէն։ Նախանձայնութիւնն ու մոլեռանդութիւնը էական են յեղափոխութիւն մը յղանալու ու յառաջ բերելու համար, բայց անյարմար են գործը վարելու, երբ յեղափոխութիւնն արդէն գրուի երաժ է։ Այս նշխարները բացառյալ կերպով ըստ չի անցեալին։ Չարութեան անկումին համար պէտք էր տապալու մը Ռուս Օրթոտոքս եկեղեցւոյ կազմակերպութեան։ Կարելի չէր Չարութիւնը տապալել ու քանդել, առանց կործանելու Ռուս Եկեղեցւոյ շէնքը»։

«1918ի միջոցին մենք ջանադիր եղանք եկեղեցին անջատել պետութենէն...»

«Անջատելը կարելի չէր գրուի համեմատաբար ու հոն ոչ-բանաւոր խառնակեց։ Երբ մենք ձեռնարկեցինք լուծել այս բազմակնճիւ խնդիրը, մեր յառաջդիմութիւնը դժուարութեանց բաղխեցաւ երկու կողմէն մոլեռանդները պնդեցին առանձնաշնորհումներուն վրայ, հակառակ մոլեռանդութիւնը միւս կողմէ շատագոյն խառն ջնջել եկեղեցին, եւ sqhsorhէ կը շիրքեր եկեղեցին կրօնի եւ կրօնի հաւատքի հետ, եւ այն-

պէսի նախանձայուպութիւն մը ցոյց տուին որ արտաքին աշխարհի մէջ ա՛յն տպաւորութիւնը թողուց թէ՛ Սովեթ Ռուսիա որոշած է ջընջել կրօնական հաւատքը:

Սովեթ Ռուսիա ո՛րեւ խնդիր չունի մարդոց հաւաստիքն ու պաշտօնական կեանքը: Մարդիկ կրնան հաւատալ իրենց ուզած Աստուծուն եւ իրենց ուզած ձևով արարչայնը այս հաւատքը: Մենք խնդիր ունէինք Գրիգոր Օրթոտոքս եկեղեցւոյ հետ, իբրեւ դաշնակից ու դործակից Յարութեան:

Նոյն իսկ ամենեւեմ կոյր մոլորանդը, որ կը ձգտէի քննարկել կրօնը, իր հոգւոյն մէջ կրօնը մը կը կրէ, քանի որ տեսիլք մը ունի, որու համար պատշաճ է զոհելու իր կեանքը: Մարդ մը չկրնար ապրիլ առանց տեսիլքի: Ինչ որ մենք անկրօններու տեսիլք կը կոչենք եկեղեցւոյ հաւատացեալ մը կրնայ կոչել կրօնը կամ հաւատքը:

Ռուսիոյ բնակչութեան 100ին 95ը իրենց տեսիլքը կրօնք կը կոչեն, քաղաքական յիմարտքիւն եւ սովեթ վարչափարսներու յաջողութեան տեսակէտով ոճիր է ժողովրդական զանգուածներու դէմ պայքարել քանի մը բաւի համար, որոնց մեկնութեան շուրջ իսկ կարելի չէ համաձայնիլ:

«Այս փիլիսոփայութեան վրայ հիմնուելով մենք բանակցութեան մտանք Ռուս Օրթոտոքս եկեղեցւոյ պատասխանատու պետերուն հետ, նախապէս անոնցմէ շատերը բուն կերպով հակառակեցան եկեղեցւոյ եւ պետութեան յարաբերութեան մասին նոր հասկացողութեան, միւս կողմէ մեր իսկ ընկերները խստիւ կը քննադատեն մեզ:

Մենք երկու կողմին հանդէպ ալ համբերութեամբ շարժեցանք: Եկեղեցւոյ ճշմարիտ հաւատացեալները հետզհետէ տեսան ու ցորչափ եկեղեցին ընդդիմութիւն չի ջատագովեր պետութեան հանդէպ եւ ինքզինքը կը նուիրէ միմիայն հոգեւոր ու հովուական գործերու, իրենք ազատ են եւ անարգել կրնան կատարել իրենց պաշտամունքը, ինչպէս որ կ'ուզեն»:

Արքեմ

ԱՆՑՈՐԴ

(Արտատպուած «Նոր Լուս»է)

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԴԵՂԱՐՈՒԵՍ

Բ

Քրիստոնէական գեղարուեստը՝ հիմնուելով հին աւանդութեան մը վրայ՝ Յիսուսը ներկայացնելու համար երկրորդ եւ երրորդ դարերուն մէջ սկսաւ իր առաջին վարանոտ փորձերը կատարել որոնց հետքերը տակաւին կը տեսնուի Բաքաֆօնկներու մէջ: Ան յաճախ ներկայացուցած է իբր «Բարի Հովիւը», «Գեղեցիկ եւ շնորհալի դէմք մը», ինչպէս որ կ'ըսէ Փրօֆ. Սթանլի: Այս իրողութիւնը մեզի կը թելադրէ խորհելու այն թարմութիւնը զոր նախկին Քրիստոնեաները Յիսուսի գալէն զիրջ տեսան աշխարհի մէջ: Անոր գալուստէն առաջ աշխարհ ծերացած եւ յոգնած էր, մահուան գալուկը կար իր դէմքին վրայ: Ջրէական կրօնքը իր հոգեւարքին մէջ էր, յունական փիլիսոփայութիւնը ուրիշ բան չէր այլ իր մեծ անցեալին մէկ աւերակը միայն: Բայց Յիսուսի գալուստը վերակենդանացուց այս հին քայքայուող աշխարհը, անոր մէջ ներմուծելով նոր ուրախութիւն եւ լոյս: Աշխարհի մը մէջ, ուր Յոյսը յարութիւն առած էր, այս նոր մարդերու ոգեւորումը եւ թարմութիւնը արտայայտուեցաւ Բաքաֆօնկի զբաւթ, պատանի հովիւի պատկերին մէջ: Այս ամէնը Բաքաֆօնկներու մէջ կը տեսնուին, ուր մանուկ եկեղեցին թաքստոց գտած էր, ուր իր մարտիրոսները իրենց յաւիտեական հանգիստը կը վայելին: Յիսուսի արթնցուցած այս նոր յոյսը այնչափ զօրաւոր էր որ Բաքաֆօնկներու նսեմութիւնը, հալածանքի բոլոր դառն յիշատակներով, չկրցաւ փարատել զայն:

Կ'արժէ հոս վերջիշել Բարի Հովիւի Բաքաֆօնկեան պատկերներուն սա մէկ յատկանիշը: Վարդապետական հակաճառութիւններէ մէկուն մէջ «Կատարին Դերդուղիանոս» (Յ. Տ. 160—230) պնդած էր թէ «Ան ոչխարները կը փրկէ, բայց այծերը չի փրկեր»: Թերեւս Ափրիկեցի Հայրապետին այս խտուրտեան դէմ բողոքելու համար Բաքաֆօնկի արուեստագէտները Յիսուսը ներկայացուցին իբր հովիւ մը՝ որ փոխանակ գառնուկի ուլ մը կը կրէր իր ուսերուն վրայ: Յիսուսի մէջ տեսնուած զուրկ, յոյսը—պստնք էին առաջին

դարերուն մէջ քրիստոնէական փորձառութեան է՛ն կարևոր տարրերը: Այդ պատանեկան եռանդով զուարթ «Բարի Հովիւ»ը Յիսուսի մասին մեր ըմբռնումը ճոխայնող կաբեւոր տարր մըն է:

Այդ ամուլ միջնադարեան շրջանին միւս ծայրը դիտէ հիմա: «Քրիստոնէական գեղարուեստին առաջին և միջին շրջաններուն միջոցին իւրեր Քրիստոսի դէմքին վրայ արտայայտուելու կը փնտռենք», կ'ըսէ Սըր Ուայթ Պայլիս: Ահա այս արտայայտութիւնն էր որ Բլենհամսի մեծ վարպետները աւելցուցին Յիսուսի նկարին վրայ: Յիսուսի մասին աւելի խոր հասկացողութիւն մը չի՞ նշանակեր այս:

Վերադարձնումը Ժ. Դարուն մէջ սկըսաւ, և գրականութեան մէջ մեզի տուաւ Տանդէն, Փեդրարքէն ու Լանկլանտը: Գեղարուեստը գրականութեան նման իր առաւօտեան աստղերը ունեցաւ, բայց իր մեծ արշալոյսը կ'ըսկսի Ճիթոյէ և Չիմապուէ. ասոնցմէ վերջ Թրա Անճէլիքօ Խալիոյ մէջ և էյք Եդրայնիւր Ֆլանտրի մէջ երեւցան, և ասոնցմէ վերջ կուգայ Միքայէլ Անճէլոյի, Թիթիանի, Բաֆայէլի, Բօրրէկիոյի և Տա Վինչիի մեծ դարը: «Այս Հնգեակը մեզի տուած են Քրիստոսի դէմքին լաւագոյն թարգմանութիւնները չոր աշխարհ երբէք տեսած ըլլայ», կ'ըսէ մեծ հեղինակ մը: Եւ այս կարելի եղաւ քանզի այս մարդիկ երեւան եկող նոր կեանքի մը վրայ յարգալիլ թափանձող տեսողութեամբ մը օժտուած իրենց գործին ձեռնարկեցին: Բարեկամ մը, որ Տա Վինչիի «Վերջին Ընթրիքը» անուն մեծ նկարը տեսնելու եկած էր, առաջին անգամ արծաթէ գաւաթը տեսաւ. Տա Վինչի վրձինը առաւ և գաւաթը սրբեց, ան չուզեց որ իր նկարին մէջ ոչ մէկ բան ուշադրութիւնը անոր կեղծողական Դէմքէն ուրիշ կէտ մը դարձնէր: Այս մասնաւոր մարդին մէջ ժամանակի ոգին այս էր: Դժբաղդաբար Տա Վինչիի նկարը գրեթէ փճացիր է, բայց «Վերջին Ընթրիքը»ի համար շինուած Յիսուսի դէմքին նախօրինակ ուրուագիծը տակաւին չէ աւրուած: Տա Վինչի այդ ուրուագիծին մէջ անշէջ գեղեցկութեամբ մը մարմնացուցած է այն տխուր և քաղցր շնորհք՝ զոր այն կարգացած էր Յիսուսի դիմագիծին վրայ: Ինչպէս որ Տա Վինչի խանդավախ, շնորհալի, մխիթարիչ Յիսուսի

պատկերը տուած է մեզի, Միքայէլ Անճէլօ ալ իր «DIES IRAE» նկարին մէջ պատկերացուցած է մեղքի դէմ Յիսուսի զգուանքը, որ մէկ կողմ կը նետէ Անոր շնորհքը: Բաֆայէլ իր Այլակերպութեան պատկերին մէջ մեզ կ'առաջնորդէ Յիսուսի ոյժին գաղտնի տեղերը և Աստուծոյ հետ Անոր խիստ մերձ հաղորդութեան: Թիթիան իր «Տուրքի Դրամը» պատկերին մէջ մեզի կը ցուցնէ կատարելապէս հաւատարակչեալ, ուժեղ նկարագիր մը, որուն վերապահ խաղաղութիւնը իր մեծ ոյժը կը յայտնէր միայն, և որ Բաֆայէլի նկարած Աստուծոյ հետ այդ սերտ հաղորդութեամբ միայն կրնայ բացատրուիլ: Բօրրէկիոյի «ECCO HOMO»-ն տառապող Փրկչին մէկ պատկերացումն է: Բոլոր ասոնք մասնայատուկ բան մը ունին Յիսուսի մասին մեզի պատմելու, և անոնք կը վկայեն շնորհքին, քաղցրութեան և պայծառափայլ սրբութեան, խաղաղ ոյժին և տառապանքին այն Անճին՝ որ հաւատացին թէ զիրենք գինով ծախու առած էր:

Անկարելի է հիմա մեզի համար քրիստոնէական գեղարուեստին ընթացքին հետեւիլ. բայց ան իր ընդհանուր գիծին մէջ մեծ յղմեւանս աւանդութեան հաւատարիմ մնացիր է: Վէլասքէզ իր Խաչելութիւնը պատկերին մէջ Փրկչին դէմքին պարզապէս մէկ աղօտ նշոյլ կուտայ մեզի, թողլով որ մենք կարգանք տառապող սիրոյ աննկարագրելի խորութիւնները: Բամպրանտ մանուկները օրհնող Յիսուսի պատկերին մէջ ճամբրիտ ժառանգորդն է Վերադարձնումով յառաջ եկած ըմբռնումին:

Մեր օրերուն մէջ Պըրն, Ճօնզ և Հօլման Հընդ Յիսուսի նշանակութեան մասին իրենց ըմբռնումը շատ յաջող կերպով արտայայտած են: Հօլման Հընթի «Աշխարհի Լոյսը» քաջածանօթ նկարը թերեւ էն սրտալոյս գրիստոնէական կոչն է որ երբէք արտասանուած ըլլայ: Այդ զուրը դարնող, սպասող Քրիստոսի դիրքին և շարժումին մէջ Աւետարանը ունինք մենք:

Հայացուց Տ. Ճ. Խ

(Շարունակելի)

ՄԿՐՏԻՉ ԱՂԱ ԿՈՍՏԱՆԵԱՆ

Մարտ 27ը Ջահլէի Հայութեան համար սուգի օր մ'եղաւ: Առտուն կանուխ ամէն մարդ իր հանդիպած Հայուն կը զուժէր ալեհեր Մկրտիչ աղայի մահը. բայց ոչ ոք կ'ուլար, բոլորն ալ կ'ըսէին. «Երանի իր հոգւոյն»:

Ութսունամեայ Մկրտիչ աղան երկու ամիսէն ի վեր տկար էր, միայն տաք օրերուն դուրս կ'ելլէր և կ'ըսէր թէ իր վերջին օրերը կ'անցնէր ու վերին կոչի կը սպասէր: Վերջին ամիսը անկողին անցուց: Ամէն ոք, եւրիտասարդ ու ծեր, պատկառելի սակայն սիրուած ու զուարճախօս հայրիկը կ'այցելէր և զարմացումով ու մտածկոտ կը վերադառնար՝ Անտեսանելիին վրայով յոյս մը, զօրաւոր հաւատք մը ստացած:

Ասկէ վեց տարի առաջ իր ծննդավայրէն, Բիլիսէն, իր բազմանդամ ընտանիքին հետ հոս ժամանած էր: Եկած օրէն իսկ իր հայրենակցին՝ պատկառելի Հաճի Կարուճ աղա Վարպետեանի հետ միասին Ջահլէի մէջ մեծ պակաս կը զգային, այսչափ Հայերու համար չկար ժողովարան մը ուր կարենային իրենց հասկցած լեզուով քարոզ լսել և պղտիկները զուրկ էին դպրոցէ: Ուստի գործի ձեռնարկեցին, Հալէպ, Պէյրութ եւ այլուր դիմեցին անձամբ կամ նամակով, միսիօնարներուն, նպաստամատոյցին, նիւ Եօրքաքնակ սրգիններուն և պարագաներուն: Վերջապէս յաջողեցան. ու մինչև հիմա յարգելի նուիրատուները կը շարունակեն իրենց օգնութիւնը տալու:

Մկրտիչ աղան, բազմանդամ ընտանիքի մը նահապետը, իր ետին կը թողու երեք որդիներ, որոնց երկուքը ընտանիքի աէր են ու միւսն ամուրի, հինգ ամուսնացեալ աղջիկներ: 16 թոռներ եւ երկու հատ թոռնորդիներ:

Ողբացեալը հաւատացող էր: Եւրիտասարդ հասակէն մինչև յետին բոպէն եկեղեցին իրեն աթոռ մը վստահած էր: Միշտ միջոց մը կ'ստեղծեր Քրիստոսի վրայ խօսելու և ըսածները կը փաստեր իր անձնական վկայութիւնով:

Վերջին օրերուն միշտ կ'ըսէր թէ վախ չունէր հանդերձեալին համար: Անվիճելի էր

իրեն համար տեղ մը նոր Սիօնի մէջ. սակայն կ'ըսէր թէ դժուար էր Յորդանանէն անցնիլ:

Քանի անգամներ իրեն ըսի. «Լաւ քննէ, չըլլայ որ խաբուես, ի՞նչ է հաւատքիդ հիմը, ի՞նչ արժանիք կը գտնես քու մէջ որու կ'ապաւնիս փրկութեանդ համար»: «Ոչինչ», ըսաւ, «իմ կողմէս, միայն հաւատքի» հիմն է Յս. Քրիստոսի խոստումը որ կ'ըսէր. «Ան որ ինծի կուգայ, բնաւ դուրս չպիտի հանեմ»: Ես իմ գործս կատարեցի, մնացածը իր գործն է:»

Կ'աղօթէր զաւակներուն ու պարագաներուն ու եկեղեցիին համար, որ Յս. Քրիստոսի հաւատան ու իրեն հետ միանան Շնորհաց գահուն շուրջ: Ահա ասոր համար էր որ 250ի մօտ բազմութիւն մը եկած էր իրենց վերջին յարգանքը մատուցանելու բարի նահապետին:

Կէսօրէ ետքը ժամը երեքին սկսաւ յուզարկաւորութեան հանդէսը, իր հիմնած ու յիշած դպրոցին երկսեռ աշակերտները երգեցին ու Տէր Սարգիս հօր Տէրունական աղօթքովը վերջացաւ հանդէսը իր բնակարանին մէջ: Բոլոր ներկաները մինչև գերեզմանատուն գացին: Ամեն մարդ կ'ըսէր, «Երանի հաւատացեալին»:

Մեր խորին յաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին պարագաներուն:

Յ. ՇՆՈՐՀՕԳԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուսանողութիւնէն ժողով Պապայիսի մէջ: Ուրբաթ օրը, Մարտ 30ին, Հալէպի Ամերիկեան Աղջկանց Սէմինէրիէն չորս աղջիկներով դէպի Պապայէք ճամբայ ելանք Ուսանողուհիներու ժողովին մասնակցելու համար: Այս ժողովին նպատակն էր Սուրիոյ աղջիկներուն օգնել աւելի երջանիկ կեանք մը ունենալու, իրենց յատուկ խնդիրներու եւ պատեհութիւններու մասին խօսակցելու, եւ զանոնք հոգիով աւելի միացնելու մէջ: Պէյրութի, Տամասկոսի, Սիդոնի, Տրիպոլիոյ, Հօմսի եւ Հալէպի վարժարանները ներկայացուցիչներ զրկած էին, թիւով 130 հոգի, որոնք կը պատկանէին Իսլամ եւ զանազան դաւանանքներէ Քրիստոնեայ համայնքներու: Հայերու թիւն էր 40:

Ամէն օր ունեցանք գործ եւ զրօսանք: Ընդհանուր նիւթն էր «Նկարագրի Շէնք»ը:

կոսակցիցանք անցեալ շինողներու մասին, այն բաներու մասին զորոնք կը պարտինք անցեալ սերունդներու: Ապա խորհրդակցութեան նիւթ եղաւ «Հիմեր»ը, թէ ինչ բաներու կը կարօտի աղջիկ մը ճշմարիտ կեանք մը շինելու համար: Երրորդ անգամ խօսակցիցանք «Շինութեան» մասին, թէ աղջիկները Սուրբիոյ մէջ ի՞նչ միջոցներ կրնան գտնել ծառայելու համար: Եւ վերջապէս Ապագայ շինողներու մասին, թէ աղջիկները ի՞նչպէս օգտակար կերպով կրնան գործել Սուրբիոյ ներկայ պայմաններուն տակ:

Շատ օգտակար եղաւ նոյնպէս խաղը, որուն միջոցաւ տարբեր լեզուներ խօսող և տարբեր կրթութեամբ շատ մը աղջիկներ իրարու բարեկամացան: Մասնաւոր նիստի մը մէջ խորհրդակցութեան առարկայ եղաւ այլազան տարրերու միջև աւելի բարեկամական յարաբերութիւն մշակելու հարցը: Այս մասնաւոր ժողովը, որ միայն աղջիկներու միջոցաւ կատարուեցաւ, առանց պետերու առաջնորդութեան անմիջական արգիւնք մը ցոյց տուաւ. Հայերը և ոչ-Հայերը զոյգ զոյգ իրարու թեւէն բռնած սկսան պտըտիլ իրր սերտ բարեկամներ:

Այժմէն կարելի չէ ըսել այս ժողովին արգիւնքը: Անշուշտ ամէն մէկ աղջիկ իրեն հետ բերած պիտի ըլլայ բարեկամութեան մասին նոր հայեացք մը եւ իր կեանքը աւելի լաւ եւ օգտակար ընելու համար նոր որոշում մը:

Հայկայի մէջ Արար Բողոքականներու համայնքը կը բաղկանայ 200 հոգիէ. եկեղեցին կազմակերպուած է 1920 ին և ունի 100 լի մօտ անդամներ: Եկեղեցիի կեանքին մէջ է՛ն նըշանաւոր գէպքը եղած է հովիւին Վեր. Ապտիւլ Բէրիմի ձեռնադրութիւնը, որ տեղի ունեցաւ 1927 Նոյ. 7ին: Երկու Ն. Բ. Զանից Ընկերութիւններ, Կիրականօրեայ Դպրոց մը և կանանց Ընկերութիւն մը արգիւնաւոր կերպով կը գործեն: Եկեղեցական յարմար չէնքի մը պակասը շատ զգալի է, ձեռնարկուած է պէտք եղած գումարին հանգանակութեան:

Հովիւը՝ Վեր. Ա. Գումի Ապրիլի սկիզբը Սայտա մեկնեցաւ Եկեղեցական Աինտի տարեկան գումարումին մասնակցելու. ապա Պէյրութ անցնելով Գործիչներու Ժողովին պիտի մասնակցի, ուր ներկայ պիտի ըլլան Տր. և Տիկ. Սփիր:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹ

ԿԻՐԱԿԻ. Յանդիսանութիւն Անճաւանդութեան հաւատ: Մարի. 10. 35-41:

Շահամով մարդիկ երկնից թագաւորութեան մէջ ոչ թէ ամենաբարձր տեղը չեն կըրնար բռնել, ամենախոնարհ տեղին ալ արժանի չեն: Մեծութիւնը ծառայելուն մէջն է: Խոնարհ է որ պատիւ եւ գիրք ունենաս:

Աղօթք. Երկնաւոր Հայր, օգնէ մեզի որ մեր կեանքը արդարութեան, սիրոյ եւ ծառայութեան հիման վրայ շինենք: «Քու թագաւորութիւնդ գայ, եւ Քու կամքդ ըլլայ երկրիս վրայ» աղօթելէն երջանկութիւն ըզգանք: Անուանդ համար: Ամէն:

Բշ. Սերը որ քնաւ չիցնար: Ա. Կոր. 13. 8-13:

Սէրը յաւիտեան կը մնայ: Ուրիշ շնորհքներ, գիտութիւն, մարգարէութիւն, լեզուներ ժամանակաւոր նպատակներու կը ծառայեն, նպատակի մը համար միջոցներ են: Սէրը մեր մարդկային էութեան կատարելագործումին համար կը մնայ: Դուն սէր ունի՞ս:

Աղօթք. Ո՛վ Աստուած իմ, Դուն ես կեանք՝ իմաստութիւն, ճշմարտութիւն, գեղեցկութիւն եւ օրհնութիւն: Դուն ես Յաւիտենական ճշմարիտ միակ Տէրը, իմ Արարիչս, ամեն պարգեւները տուողը, յոյս եւ սրտիս ուրախութիւնը: Օգնէ ինձ որ Քեզ աւելի ճանչնամ, սիրեմ եւ վայելեմ: Յանուն Յիսուսի: Ամէն:

Գշ. Իմ Հօրս տունը. Յոնի. 2. 13-17:

Աստուած ամեն տեղ է: Նա ձեռքով շինուած տաճարներու մէջ չի բնակիր: Սակայն մենք եկեղեցիներ կը կառուցանենք Անոր նուիրուած, որպէս զի միասին Անոր պաշտելով ներկայութիւնը զգանք եւ հաղորդակցութեամբ ամեն օր հոգեւոր սնունդ առնենք Տէրոջը գործին մէջ զօրանալու համար:

Աղօթք. Տէ՛ր, առատ օրհնութիւններդ եկեղեցիիդ վրայ թող գան: Զայն ճշմարտութեամբ եւ խաղաղութեամբ լեցուր: Երբ սխալի, ուղղէ գայն, երբ տկարանայ զօրացուր, առաջնորդէ գայն արդարութեան ճամբուն մէջ: Միաբանութեան հոգին իւր ոյժը միշտ թող յայտնէ: Ո՛վ Իսրայէլի Սուրբը, ազատէ Քու մարմինդ բաժանումներէ և երկպառակութենէ: Ամէն:

Դշ. Աշակերտներ շահիդ. Յովհ. 1. 43-51:

Ի՞նչ մեծ պատեհութիւն է ուրիշները Աստուծոյ թագաւորութեան առաջնորդել և նշնակարագիր շինելու օգնել: Այս գործին մէջ ուրիշներուն օգնելով մենք ալ կը զօրանանք և կը յաջողինք Տէրոջը գործին մէջ: Դուռն վայելած ես այս արտօնութիւնը:

Աղօթք. Ո՛վ Յիսուս, եկեղեցիդ աւետարանիչները և առաջնորդները Դուռն օրհնէ: Յաջողէ գիրենք իրենց սուրբ պարտականութեանց մէջ: Աւետարանչական մարմիններուն անդամներուն և գործիչներուն հաւատքի, համբերութեան և յարատեւութեան հոգի շնորհէ, մինչև որ երկիրը Տէրոջը գիտութիւնովը լիցուն ըլլայ: Փառքիդ համար: Ամէն:

Եշ. Երանիներ. Մատթ. 5. 3-12:

Բազդատէ Մինայէն եկող որոտումները՝ Երանելիներու լեռնէ եկող անուշ ձայնին հետ, ի՞նչ մեծ տարբերութիւն կայ: Մէկուն մէջ սպառնալիք կը տիրէ, միւսին մէջ սէր և ուրախութիւն: Աստուած քեզ Երանիներուն դասին մէջ դնել կ'ուզէ: Պայմաններն են, հոգեով աղքատ, հեղ և սրտով մաքուր ըլլալ: Ասոնք Սուրբ Հոգիին շնորհքներն են: Ունի՞րս զանոնք:

Աղօթք. Ո՛վ Տէր, նորոգէ մեր հոգիները, մեր սիրտերը Բեզի քաջէ, որ մեր գործերը ուրախութեամբ կատարենք: Սէր ներշնչէ մեզի որպէս զի մեր հնազանդութիւնը քաղցր ըլլայ: Յիսուսի պատուական անունովը: Ամէն:

ՈՒՐԲԱԹ. Ճշմարիտ գանձը: Մատթ. 6. 19-24:

Նիւթականը հոգեւորին համար գոհելչատեւուն համար դժուար է, քանզի մէկը տեսանելի իսկ միւսը անտեսանելի է: Սակայն գիտցիր որ արծաթը և ոսկին մնայուն չեն: Նկարագիրն է որ կը մնայ: Մին ժամանակաւոր գանձ մ'է, միւսը՝ յաւիտենական, հոգին է որ յաւիտեան պիտ' ապրի:

Աղօթք. Տէ՛ր, քու լեցունութենէդ ինծի իմաստութիւն և խոհեմութիւն շնորհէ որ իբր գանձ ընդունիմ ինչ որ ճշմարիտ է, հոգեւոր և մնայուն: Սիրոյդ համար: Ամէն:

ՀԱՔԱԹ. Սերը սահման չունի. Ղուկ. 6. 32-38:

Կը սիրէ տալ, քան թէ առնել, թշնամի

չունի: Սէրը Բրիտանական բարոյականի հոգին է և սիրտը, ամէն առաքինութեանց մայրը և ապաստանարանը բոլոր նեղեալներուն:

Աղօթք. Ողորմած Տէր, իմ նեղութեանս ժամանակ Դու ողորմութիւնդ իմ ապաւէնս թող ըլլայ, ոչ մէկ պարագայ զիս թող չ'արգիլէ Բեզ «Հայր» կոչելէ: Դու սիրոյդ ովկէանին մէջ իմ հոգիս իր գոհացումը թող զլտնէ: Յաւուռն Յիսուսի: Ամէն:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ԱՇԱԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՁՈՀՈՂՈՒԹԻՒՆ

Մարկ. 10. 17-27, 12. 41-44:

Ապրիլ 29

Յատկապիժ. 1) Հարուստ մը 10. 17-22:
2) Աղքատ աչրի մը 13. 41-44: Հարստութիւնը իբր արգիւք 10. 23-27:

Ուրհորդածութիւնք. 1) Հարուստ մարդը և ուսնդուն, քաղաքավար և բարի էր: Յիսուս սիրեց զայն: Բայց այն դադարաբէ գուրկէր և ծանծաղամիտ: Այս սովորական բան մ'է բարեկեցիկ կ'ընէ մարդոց համար, որոնք զրամ և սպասաւորներ ունին բայց ո՛չ ծանր գործ: Յիսուս անոր ուշադրութիւնը գրաւեց իր անխորհուրդ քաղաքավարութեան. գործածելով ածական մը որ միայն կրօնապէս պէտք է առնուի: Անոր զրամական գծուարութիւնը երևան հանեց, որմէ անոր հոգին պէտք էր ազատիլ: Յիսուս կ'ուզէր անոր խորհուրդ և ազատութիւն տալ, և ապա կ'ուզէր որ իրեն հետեւի: Ասկէ վերջ թագաւորի կողմանէ Արքայութեան նոր կեանքը պիտի շնորհուէր: Մարդը իր մասին, նոր կեանքը առնելու և զրամը իրեն պահելու մասին կը խորհէր: Ան չհասկցաւ նոր կեանքը կամ իր վիճակը: Յիսուս երկուքն ալ հասկըցաւ և անոնց համեմատ պատասխանեց: Ան հոգ չէր ընել մարդուն զրամին մասին (Կարդա՛ Փիլ. 3. 8):

2) Աղքատ աչրին խոհական էր: Աղքատները այդպէս պէտք է ըլլան: Ան աւելի Աստուծոյ մասին կը խորհէր քան թէ իր պէտքին վրայ: Իր ըրածը ցուցուց այս: Յիսուս հասկցաւ զայն: Ան իրապէս Աստուծոյ օրհնութեան կ'ըզձար: Երկիրքի մէջ էր անոր

զանձը, որուն մասին Յիսուս հարուստին ըսաւ:

3. Հարստութիւնը մարդը կ'արգիլէ արքայութիւն մտնելէ, քանզի մտնելէ առաջ իր բոլոր ունեցածին հսկողութիւնը պէտք է թագաւորին յանձնէ: Արքայութիւնը հոգեւոր թագաւորութիւն մ'է, որուն մէկը կրնայ մտնել ամէն բանէ մերկանալով: Ընչասէր մարդու մը համար այս շատ դժուար է: Ուրեմն կարելի՞ է յաւիտեանական կեանք ունենալ: Յիսուս կը պատասխանէ որ մարդկային ոյժով անկարելի է այս: Ան Աստուծոյ մէկ շնորհքն է, չէթէ մարդկային ջանքի արդիւնքը: Աստուած կրնայ տալ ինչ որ մարդ չի կրնար շահիլ:

Դասեր. 1) Յիսուս կը հասկնայ մեր սրտերը. իթէ իրապէս կուզենք յաւիտեանական կեանք ունենալ, Յիսուս կրնայ մեզի ճիշդ պէտք եղած ուղղութիւնը տալ զայն ապահովելու համար: 2) Յիսուս կ'ուզէ իւրաքանչիւր մարդը խոհական, հասկցող, ազատ և յաւիտեանական կեանքի տէր ընել: Յիսուսի յանձնուիլ և հնազանդիլ այս բոլորը յառաջ պիտի բերին: 3) Մարդիկ Յիսուսի գալով իրենք զիրենք չեն փրկիր: Աստուած է որ Յիսուս Քրիստոսով զանոնք կը փրկէ (կարդա Նփս. 2. 8):

ՄԵԾՈՒԹԻՒՆ ՄԱՌԱՅՈՒԹԵԱՄԲ

Մարկ. 9. 33-50, 10. 35-45:

Մայիս 6

Յասակագիծ. Յիսուս ի՞նչ ըսաւ. — 1) Երբ աշակերտները կը վիճէին թէ իրենցմէ ո՞վ է՞ն մեծն էր, և 2) Երբ Յակորոս և Յովհաննէս իր Արքայութեան մէջ է՞ն բարձր պաշտօնները կ'ուզէին:

Խորհրդածութիւնք. Յիսուս փորձեց իր աշակերտներուն սորվեցնել իր մօտալուտ տառապանքին մասին: Բայց այս երկու դէպքերը, որոնք այս փորձերուն յաջորդեցին, կը ցուցնեն թէ ո՞րչափ քիչ տպաւորութիւն ձգած էր այս անոնց վրայ (9. 30-32, 10. 32-34): Այս երկու դէպքերուն մէջ կարեւոր կէտը այս է՝ թէ Յիսուսի աշակերտները իրենց ծառայութեամբը նշանաւոր պէտք է ըլլան:

1) Աշակերտները իրենց մեծութեամբը կը հետաքրքրուէին, բայց վերջը խոստով կը մնային Յիսուսի առջև: Յիսուս կ'ուզէր ա-

նոնց մէջ տեսնել խաղաղութիւն, խոնարհութիւն և ծառայութիւն: Իր պատասխանը կը պարունակէր սա գաղափարները. «Խոնարհ մարդու մը ընծայուած պղտիկ ծառայութիւն մը անհունօրէն կրնայ մեծ ըլլալ, զոր օրինակ իմ անունովս մանուկ մը ընդունիլ (37) կամ ումայ մը ջուր տալ: Մեծ ոճրապործութիւն է պղտիկ գայթակղութեան մը պատճառ ըլլալ (42): Եթէ ձեր մէջը ձեր հոգեւոր կեանքը վնասող ուէ գայթակղութեան պատճառ մը կայ, պէտք է ամէն զինով անկէ ազատիք (43-44): Դուք մաքրուած կեանք մը պէտք է ապրիք (49): Զօրաւոր և կատարեալ պահեցէ՛ք նոր «Աղով» կեանքը այն մարդոց որոնք աշխարհի աղն են:

2) Յիսուս պէտք էր գործել իր աշակերտներուն անձնասիրութիւնը և տգիտութիւնը նկատի առնելով: Անոնց յայտնեց իրենց տգիտութիւնը (38), անոնց առաջարկեց բաժնել իր տառապանքները (39), և անոնց ըսաւ թէ այլապէս իրենց պահանջը անօգուտ է (40): Աշակերտներուն պարզեց իր թագաւորութիւնը իրր հակապատկերը իրենց գիտցած կառավարութիւններուն (42, 43), և ըսաւ թէ իր կեանքը նոր թագաւորութեան մէջ մեծ եղողի մը կեանքին մէկ օրինակն է (45): Տասը աշակերտներուն գանգատը, Յակորոսի և Յովհաննէսի պահանջին պէս, անձնասիրութեան, տգիտութեան և աւելի ըլլալով նախանձի վրայ հիմնուած էր: Անոնք Յիսուսի ընտրեալ աշակերտներն էին, որոնք Անոր անունով հրաշքներ գործեր էին: Բայց անոնց շարժառիթները անխառն չէին, անոնք Յիսուսի փափաքէն շատ հեռի կը գտնուէին: Բայց Յիսուս զանոնք չլքեց, այլ զանոնք ուղղեց, անոնց օգնելու համար բոլոր կրցածը ըրաւ:

Դասեր. Այս դասը անոնց համար է՝ որոնք իրենք զիրենք Յիսուսի աշակերտները կը նկատեն: Իւրաքանչիւր մարդ պէտք է այս դասը իրեն համար խորհի և ո՛չ թէ ուրիշներուն համար: Ամէն ոք պէտք է փափաքի որ իր կեանքը գայթակղութենէ ազատ ըլլայ: Ես կ'զգամ թէ իմ առօրեայ գործերուն հոգեւոր նշանակութիւնը ի՞նչ է: Իմ ազգեցողութիւնս ուրիշներուն կ'օգնէ հաւատքի կեանքը ապրելու, թէ արդեւ մը կը հանգիստանայ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

Վանքին մօտ՝ թափորը կանգ առաւ։ Ի նշան յարգանաց նուագները լռեցին, ու ժողովուրդին կողմանէ երկու ներկայացուցիչներ Վանահօր ներկայացան, և ծնրադրելով անոր առջին՝ խոնարհաբար խնդրեցին որ բարի Վանահայրը ընդունի Հռոդոսի ժողովուրդին երախտագիտական զգացումներուն իբր նշան փոքր տուփ մը՝ որը կը պարունակէր թանկագին գոհարներու անսպիւտ հաւաքածոյ մը։

Վանահայրը օրհնեց զանոնք և ընդունեց անոնց բերած նուէրը։

Այն ատեն երկու պատուիրակները ներկայացուցին իրենց երկրորդ խնդիրքը՝ աղաչելով որ Վիշապն սպաննող ասպետին աստիճանի բարձրացում շնորհուէր իր ըրած մեծ բարեաց փոխարէն։ Վանահայրը տխուր ժլպիտով մը պատասխանեց թէ անկարելի էր իրենց այս խնդիրքը կատարել, որովհետեւ այն երիտասարդ սպան իր մեծաւորին հնազանդելու երդումը աւրած էր։

Ու անմիջապէս ոտք ելաւ, իր երկու հիւրերուն ընկերակցութեամբ Վանքին զրսի գուռը ելլելով տեսաւ որ անգլին բազմութիւն մը իր պատասխանին կ'սպասէր։

Վանահօր երևնալուն վրայ իսկոյն նուագարանները նոր թափով մը սկսան ու ժողովուրդին ուրախութեան և ցնծութեան արտայայտութիւններն չափ ու սահման չունէին։

Վանահայրը քայլ մը եւս յառաջ եկաւ, ձեռքովը նշան մ'ըրաւ, ամենը լռեցին, ու այս պատկառելի լռութեան մէջ յատակ ու ու-

րոշ ձայնով մը հետեւեալ բառերը խօսեցաւ։—

Ո՛վ Հռոդոսի ժողովուրդ, ինչո՞ւ համար ինծի շնորհակալ կ'ըլլաք, փառք տուէ՛ք Աստուծոյ՝ որ այս քաջ ասպետին միջոցաւ աղաւտեց զձեզ այն սոսկալի գազանին ճիրաններէն։ Կը շնորհաւորեմ ձեզ այս թանկագին ապատութեան համար։—Հազիւ այս բառերը լսուեցան՝ և ահա ամբողջ ժողովուրդը որդաւնդոտ ծափերու երկարատեւ տարափով և կիցցէներու խանդավառ աղաղակով մը իրենց գոհունակութիւնը յայտնեցին։... Երբ ծափերը վերջացան՝ ձերուներն իր խօսքը ասպետին ուղղելով ըսաւ։—

Երիտասարդ ասպետ, կը գովեմ քաջութիւնդ՝ որով յանդգնեցար մինակդ սպաննելու այն ամենի գազանը ու փրկիչը հանդիսանալու համայն Հռոդոսի, որուն երախտագէտ ժողովուրդը այսօր կը փութայ այնքան փառայեղօրէն պանծացնել քու գովելի քաջութիւնդ. և սակայն ես կը դատապարտեմ այս արարքդ, որովհետեւ իմ պատուէրիս հակառակ՝ այս գազանը սպաննելովդ՝ ասկէ հազար անգամ աւելի սոսկալի կողոպտանալու զութեան գազանը ողջնցուցիր քու դեռատի սրտիդ մէջ. զնա՛, այսուհետեւ ուր որ կ'ուզես, աշխարհի մէջ քեզ զովոյնք կրնաս ունենալ, սակայն չես կրնար այլեւս ոտք կոխել այս տաճարական ասպետներու վանքը՝ սրբապղծելու զայն քու երդմնադրութ ու անհնազանդ արարքովդ։

Հնազանդութիւնը գոհէն ու խօսքը մը տիկ ընելը խոյրու ճարպէն աղէկ է։

(ՎԵՐՁ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կրօնքն ու Եկեղեցին

ԱՆՑՈՐԴ

ԹՕԴՈՒԱԾՆԵՐ

Քրիստոս և Գոթարուես

Տ. Ճ. Խ.

Միրսից աղա Կոստանեան

ՊԱՏ. ՅԿԲ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

Կ. ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկչաբարթերթ։

Արտօնատէր, ՎԵՐ. Կ. Յարութիւնեան

Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ

Արտասահման » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE